ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

16 մարտի 2012 թվականի թիվ 9 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԻՐԵՆՑ ՍԵՓԱԿԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77^3 հոդվածով և հաշվի առնելով Իջևան համայնքի ղեկավարի 09 փետրվարի 2012թ. թիվ 41 գրությունը

կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի քաղաքային համայնքի իրենց սեփական և պետության պատվիրակած լիազորությունների իրականացման հարցերով խորհրդատվություն ցուցաբերելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Միշա Մխիթարյան – Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ ՏԾ հարցերով վարչության պետ

Համլետ Ավալյան– ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի Քարտուղարության պետ

Ասքանազ Բաբլումյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչ

Արման Գևորգյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ

2. Հանձնարարել հանձնաժողովին՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77^3 հոդվածի դրույթի համաձայն Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի քաղաքային համայնքին ցուցաբերել խորհրդատվություն իրենց սեփական և պետության պատվիրակած լիազորությունների իրականացման հարցերով:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

16 մարտի 2012թ.
ք. Իջևան